

ԹԱՐԳՄԱՆԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 7

ք. Երևան

« 21 » դեկտեմբերի 2020թ.

Դատական դեպարտամենտը՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Կարինե Նալչաջյանի (այսուհետև՝ Կատարող), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից, վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պայմանագիրը խախտելու հետևանքով պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան

մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՎՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուին ներկայացված՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված զեկուցագրի (այսուհետ՝ Ջեկուցագիր) հիման վրա: Ջեկուցագիրը ներկայացվում է համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարի կողմից՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 3 հավելվածով սահմանված տեղեկանքի ներկայացումից հետո 20 օրվա ընթացքում: Ջեկուցագիրը կազմվում է տվյալ դատարանի կողմից տրված՝ մատուցված ծառայությունների ծավալի (թարգմանված՝ էջերի, նիշերի, թարգմանության՝ ժամերի, րոպեների պարտադիր նշումով) վերաբերյալ տեղեկանքի հիման վրա:

Ջեկուցագրում նշվում են ծառայություններ մատուցած անձի անունը, ազգանունը, ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում), ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանած էջերի թիվը, իրավասու մարմնի՝ դատարանի անվանումն ու այն վարույթի անվանումը, որում անձը ներգրավվել է ծառայությունների մատուցման նպատակով:

Ջեկուցագրին կցվում է դատարանի կողմից տրված տեղեկանքը, որը ներկայացվում է Կատարողի կողմից համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարին՝ Ծառայության մատուցման ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարը Ջեկուցագիրը կազմում և ստորագրում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Ջեկուցագիրը ստորագրվում է նաև Կատարողի կողմից: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Ջեկուցագիրը չի ստորագրվում և այդ մասին անհապաղ տեղյակ է պահվում Պատվիրատուն, ով՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Եթե պայմանագրի 3.1 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարը չի կազմում սույն կետի պահանջներին համապատասխան Ջեկուցագիրը, չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա ծառայությունը համարվում է ընդունված և 3.1 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը համապատասխան դատարանի աշխատակազմի ղեկավարը Ջեկուցագիրը Կատարողին է տրամադրում՝ Պատվիրատուին ներկայացնելու համար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը՝ սահմանված է

համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով սահմանված գնային ցանկի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.1.1. Եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը պակաս է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա Պատվիրատուն վճարում է միայն փաստացի մատուցված ծառայությանը համարժեք չափով, իսկ եթե փաստացի մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը ավել է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողին՝ առանձին տողով ունեցած բյուջետային հատկացումից, ապա այդ մասով վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ հարցը կարգավորվում է Կողմերի միջև կնքվող համաձայնագրով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պատվիրատուի կողմից որոշված Ստացողի և Կատարողի հաստատած զեկուցագրի հիման վրա (եթե զեկուցագիրը Պատվիրատուն ստանում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2021

թվականի դեկտեմբերի 31-ը:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 02583241



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Կրթարան Սոնա» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 68/28
«Անելիքբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813000406200
ՀՎՀՀ 00106337



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Գնային ցանկ

Հ/հ	Չափաբաժնի (ծառայության) անվանում և բնութագիր	Թարգմանիչների Ա.Ա.Հ.	Ծառայության մատուցման միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ-ն (ՀՀ դրամ)
1	Գրավոր թարգմանություն հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն	Ալեքսանդրինա Գրիգորյան	1490
2	Գրավոր թարգմանություն հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն	Շուշան Հարությունյան	2690
3	Գրավոր թարգմանություն հայերենից գերմաներեն, գերմաներենից հայերեն	Սոնա Ազիզյան, Մարիամ Անտոնյան	2900
4	Գրավոր թարգմանություն հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն	Գևորգ Գալստյան	2690
5	Գրավոր թարգմանություն հայերենից իսպաներեն, իսպաներենից հայերեն	Աստղիկ Մելիք-Քարամյան	2690
6	Գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն	Ծովինար Թորոսյան, Արմինե Մինասյան	1390
7	Գրավոր թարգմանություն հայերենից հունարեն, հունարենից հայերեն	Սոնա Ազիզյան	3900
8	Գրավոր թարգմանություն հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն	Էդիտա Մուրադյան, Ռինա Շազինյան	2600
9	Գրավոր թարգմանություն հայերենից լեհերեն, լեհերենից հայերեն	Մարիամ Կադայան	4300
10	Գրավոր թարգմանություն հայերենից արաբերեն, արաբերենից հայերեն	Մարալ Զաքարյան	4900
11	Գրավոր թարգմանություն հայերենից իտալերեն, իտալերենից հայերեն	Անուշ Գարսանցյան, Նվարդ Սարգսյան	4300
12	Գրավոր թարգմանություն հայերենից պարսկերեն, պարսկերենից հայերեն	Հրանուշ Թախմասյան, Էմմա Մանուկյան	2200
13	Գրավոր թարգմանություն հայերենից բուլղարերեն, բուլղարերենից հայերեն	Գոհար Աբովյան	4900
14	Գրավոր թարգմանություն հայերենից ադրբեջաներեն, ադրբեջաներենից հայերեն	Գևորգ Գալստյան	6300
15	Գրավոր թարգմանություն հայերենից չինարեն, չինարենից հայերեն	Գայանե Մալիշենկո	14000
16	Գրավոր թարգմանություն հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն	Սիրանուշ Աղաբեկյան	9900
17	Գրավոր թարգմանություն հայերենից հնդկերեն, հնդկերենից հայերեն	Գայանե Նաջարյան	4200
18	Գրավոր թարգմանություն հայերենից ուկրաիներեն, ուկրաիներենից հայերեն	Նարինե Ենգիբարյան	3400

19	Գրավոր թարգմանություն հայերենից քրդերեն, քրդերենից հայերեն	Խանե Մահմուդյան	3900
20	Գրավոր թարգմանություն հայերենից պորտուգալերեն, պորտուգալերենից հայերեն	Աստղիկ Մելիք-Քարամյան	8500
21	Սուրդո թարգմանություն՝ խոլ ու համրերի համար	Քրիստինե Բրտոյան	7500
22	Բանավոր թարգմանություն հայերենից անգլերեն, անգլերենից հայերեն	Ալեքսանդրինա Գրիգորյան	6400
23	Բանավոր թարգմանություն հայերենից ֆրանսերեն, ֆրանսերենից հայերեն	Շուշան Հարությունյան	8000
24	Բանավոր թարգմանություն հայերենից գերմաներեն, գերմաներենից հայերեն	Սոնա Ազիզյան, Մարիամ Անտոնյան	13000
25	Բանավոր թարգմանություն հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն	Գևորգ Գալփակյան	9900
26	Բանավոր թարգմանություն հայերենից իսպաներեն, իսպաներենից հայերեն	Աստղիկ Մելիք-Քարամյան	13500
27	Բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն	Ծովինար Թորոսյան, Արմինե Մինասյան	6400
28	Բանավոր թարգմանություն հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն	Էդիպա Մուրադյան, Ռինա Շագինյան	6900
29	Բանավոր թարգմանություն հայերենից արաբերեն, արաբերենից հայերեն	Մարալ Զաքարյան	7000
30	Բանավոր թարգմանություն հայերենից իտալերեն, իտալերենից հայերեն	Անուշ Գարսանցյան, Նվարդ Սարգսյան	12900
31	Բանավոր թարգմանություն հայերենից պարսկերեն, պարսկերենից հայերեն	Հրանուշ Թախմասյան, Էմմա Մանուկյան	6400
32	Բանավոր թարգմանություն հայերենից ադրբեջաներեն, ադրբեջաներենից հայերեն	Գևորգ Գալփակյան	14000
33	Բանավոր թարգմանություն հայերենից չինարեն, չինարենից հայերեն	Գայանե Մալիշենկո	14500
34	Բանավոր թարգմանություն հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն	Սիրանուշ Աղաբեկյան	17000
35	Բանավոր թարգմանություն հայերենից հնդկերեն, հնդկերենից հայերեն	Գայանե Նաջարյան	8500
36	Բանավոր թարգմանություն հայերենից քրդերեն, քրդերենից հայերեն	Խանե Մահմուդյան	7900
37	Բանավոր թարգմանություն հայերենից պորտուգալերեն, պորտուգալերենից հայերեն	Աստղիկ Մելիք-Քարամյան	20000

II Ծառայության մատուցման ընդհանուր ժամկետը

Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և Կողմերի միջև կնքվող սույն պայմանագրի հիման վրա և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Միջին բարդության իրավաբանական թարգմանությունը՝ Պատվիրատուի կամ դատարանի կողմից հանձնարարված պատշաճ որակի թարգմանությունն է:

Լրացուցիչ պահանջներ՝

1. Թարգմանիչների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 20-

ի «Թարգմանչի որակավորման կարգը սահմանելու մասին» N 1509-Ն որոշմանը համապատասխան որակավորված համարվող անձ հանդիսանալը հավաստող համապատասխան փաստաթղթերը կցվում են յուրաքանչյուր թարգմանչական գործին:

2. Գրավոր թարգմանության դեպքում Պատվիրատուն՝ թարգմանվող տեքստը Կատարողին հանձնում է թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Կատարողը՝ տեքստը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը և Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային և դրա էլեկտրոնային տարբերակներով:

3. Թարգմանված նյութերը պետք է տրամադրվեն առնվազն երկու օրինակից, իսկ Պատվիրատուի պահանջի դեպքում՝ նաև երեք օրինակից:

4. Թարգմանվող նյութերում կնիքի և ստորագրության առկայության դեպքում թարգմանությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

- ✓ Կնիքի առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Կնիք գինանշան> /կնիքի վրա առկա գրառումները չեն թարգմանվում/, /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի կնքված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում նույն կնիքը համապատասխան ձևով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի կնիքների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Ստորագրության առկայության դեպքում թարգմանվում է հետևյալ կերպ՝ թարգմանվող լեզվով <Ստորագրություն> /եթե մեկ գործի շրջանակներում թարգմանվող նյութերի ստորագրված էջերի քանակը գերազանցում են 1-ը, ապա թարգմանվող նյութերում ստորագրությունը համապատասխան լեզվով թարգմանվում է մեկ անգամ՝ թարգմանվող նյութերի վերջին էջում: Մեկից ավելի ստորագրությունների առկայության դեպքում թարգմանությունը կատարվում է նշվածին համապատասխան նույն ձևով/
- ✓ Թարգմանության ներկայացված նյութերում առկա՝ մաթեմատիկական բանաձևերը, վիճակագրական դիագրամները, ֆինանսական կամ այլ հաշվարկների վերաբերյալ աղյուսակները, ինչպես նաև այն նշումները, որոնք թարգմանության արդյունքում փոփոխության չեն ենթարկվում, 'այսինքն' չեն թարգմանվում, ուստի չեն կարող հաշվարկվել որպես թարգմանված նյութի միավորներ:
- ✓ Եթե թարգմանության ներկայացված նյութերում առկա թվանշանների քանակը գերազանցում է 5 էջը, ապա դրանք թարգմանված փաստաթղթում արտացոլվելու համար վճարվում է 5 էջին համարժեք չափով:

Ծանոթություն՝

1. Գրավոր թարգմանված նյութի մեկ միավորի գինը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի համար, այն պետք է բաղկացած լինի 1800 նիշից. բացատը նիշ չի համարվում:
2. Մինչև 1800 նիշից բաղկացած թարգմանված նյութի համար թարգմանված նյութի գնի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ՝ մեկ էջի (1800 նիշ) համար սահմանված գին /1800 x

թարգմանված նյութի նիշերի քանակ:

3. Թարգմանված նյութը ներկայացվում է A4 ֆորմատով, տառերը՝ 12 շրիֆտով: Էջերի լուսանցքները՝ վերևից 20 մմ, ներքևից 25 մմ, աջից 15 մմ և ձախից 30 մմ, Միջտողային միջակայքը՝ 1.5:
4. Բանավոր և խոլ համրերի համար սուրդո թարգմանությունը կատարվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը՝ Պատվիրատուի պահանջը ստանալու օրվանից դատավորի որոշմամբ սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը: Նշված թարգմանությունների մեկ միավորի գինը հաշվարկվում է ժամով, որը ներառում է բացառապես դատական նիստի փաստացի տևողությունը:
5. Եթե թարգմանության կամ այլ ծառայության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի: Եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես թարգմանչական էջը, բայց պակասում է մեկ թարգմանչական էջից, ապա այն հավասարեցվում է մեկ թարգմանչական էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես թարգմանչական էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես թարգմանչական էջի:

Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացատով էջը, բացառությամբ չինարեն, կորեերեն, ճապոներեն լեզուների:

6. Գնման առարկա հանդիսացող թարգմանության ծառայությունները Դատական դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար ձեռքբերվող թարգմանության ծառայություններ են, որոնք մատուցվում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում (ներառյալ՝ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում գործող Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի նստավայրը): Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Դատական դեպարտամենտ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական

վարչություն

ՀՎՀՀ 02583241

Դեկավար Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Կրթարան Սոնա» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 68/28

«Անելիքբանկ» ՓԲԸ
Հ/Հ-11813000406200

ՀՎՀՀ 00106337

Տնօրեն Կ. Նալչաջյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ N
ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատու՝ _____

Կատարող՝ _____

(Ծառայություններ մատուցած անձի անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը)

Դատարանի անվանումը՝ _____

Վարույթի անվանումը՝ _____

Ձեկուցագիր ներկայացնող _____

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը	կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը
			ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանած էջերի թիվը	ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում),		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկանքները և բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն Ձեկուցագրի բաղկացուցիչ մասը:

Ծառայությունն ընդունեց

Կ.Տ.

Ծանոթացա, համաձայն եմ
Կատարող՝ _____

ՏԵՂԵԿԱՆՔ N

(պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին վճարվելիք գումարի չափի վերաբերյալ)

_____,
(վարույթն իրականացնող մարմնի անվանումը)

(թարգմանչի Ա. Ա. Հ., կազմակերպության անվանումը), (տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձի Ա. Ա. Հ.)

(ծառայությունների ծավալի մանրամասն նկարագրությունը)

ԴԱՏԱՎՈՐ

ազգանուն, անուն

ստորագրություն